№ 264 ՈՒՐԲԱԹ, 21 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1914
ԳԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 21 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 264

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 7 ամսվանը 6 բուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1915 Թ. ՀԱՄԱՐ

(ՀԱՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 բուբ.	9 բուբ.	8 բուբ.	7 բուբ.	6 բուբ.	5 բուբ.	4 բուբ.	3 բուբ.	2 բուբ.

Դեկտեմբերի 1-ից մինչեւ յունվարի 1-ը 85 կօպ., իսկ նրանք, որոնք կուզենան ստանալ նաեւ «Մշակի» հրատարակած քարտէզը, պէտք է ուղարկեն 1 բուբլի։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլար. Շւրօպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կոպ. նամակադրոշմ։

Հին բաժանորդներին խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» ՏԱՐԵԿԱՆ այն բաժանորդները, որոնք 1915 թ. համար (սկսած յունվարի 1-ից 1915 թ.) միանուագ կամ մաս-մաս վճարած կունենան 10 բուբլի բաժանորդավճարը, կը ստանան 1915 թ. ընթացքում ՁՐԻԱԲԱՐ հետեւեալ նոր լոյս տեսնելիք գրքերը.

1) „Տանջվածը", մեծ վէպ ՇԱՀՐԻԱՐԻ, հայկական յեղափոխական կեանքից։

2) „Հայկական հարցը", լուսաբանված դոկումէնտներով, մի ստուար հատոր, պատկերներով։

Ծանօթ.—Արտասահմանեան բաժանորդները ստանալու համար պիտի ուղարկեն ճանապարհածախքը, որի քանակը կը յայտարարվի իր ժամանակին։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Նորին Սրբութիւն Ծայրագոյն Պատրիարքի,
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
Բարձրագոյն հովանաւորութեան տակ գտնվող պատերազմից վնասվածներին օգնող
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՆԸ
սկսելով նուիրաբերութիւնների ընդունելութիւնը, խոնարհաբար խնդրում է բոլոր սրտացաւ անձնաւորութիւններին իրանց առատ նուէրներով ջերմ արձագանք տալ Կոմիտէի կոչին։
Օտար քաղաքները թող բարեհաճեն իրանց նուէրները ուղարկել հեռեւեալ հասցէով՝ Тифлисъ, Тифлисскій Коммерческій Банкъ, կամ Ул. Петра Великаго, № 3, с. д. казначею Гавріилу Моисеевичу Цуринову. իսկ Թիֆլիսցիները կարող են ուղարկել իրանց նուիրաբերութիւնները Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Գրասենեակը՝ Абасъ-Абадская пл. д. № 7.
(օ.մ.) առ. 1001. 5—3

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)
Այսօր, շաբաթ, Նոյեմբերի 21-ին
ՀԱՅԿ. ԴՐԱՄ. ԽՄԲԱԿ.
Կը ներկայացնէ
Ոճրագործի Ընտանիքը
Դրամա 5 գործ. Զ. Բովեանի, թարգմ. Է. Տէր-Գրիգորեանի։
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ. օր. օր. Արծուիկ, Վանեցեան, պ. պ. Ամօ-Խարագեան, Աղաբաբեան, Բագրատունի, Մարութեան, Մի-քայէլեան։
Սկիզբը երեկ. ճիշդ ժամը 8-ին։
Տեղերի գները 50—4 կ.։
Բեժիսեօր՝ ԱՄՕ-ԽԱՐԱԳԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝
Ա. Նազարէթեան և Մ. Ստամբոլցեան
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՄԲՈՂՋ ՀԱՍՈՑԹԻ 2%-Ը ՅԱՏԿԱՑՎԱԾ Է ՊԱՀԵՍՏԻ ԶԻՆԻՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՕԳՏԻՆ։
ԱԶԴ—Պատրաստվում է «ՍՕԿՐԱՏ» և «ՃԱԿԱՏԱԳԻՐ ՄԱՐԴԸ»
առ. 1012. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Ուրբաթ, Նոյեմբերի 21-ին
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏ. ԸՆԿ. ԽՈՒՄԲԸ
Կը ներկայացնէ առաջին անգամ Ժողովրանի բեմի վրա
ՔԱՕՍ
Կոմէդիա 3 գործ. Ալ. Արէլեանի
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—տ. տ. Աշխէն, Ժասմէն, Լիւսի, Մանուչարեան, Մարի, Յասմիկ, պ. պ. ԱԲԻԼԵԱՆ, Սւետեան, Ալլահվերդեան, Մանուէլեան, Մուրադեան, Տէր-Առաքելեան, Խորէն և ուրիշները։
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Տոմսակները 1 բուբլուց մինչեւ 30 կ.
Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ վճարում են մուտքի համար—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները 25-ական կոպէկ։
առ. 1007. 1—1

„Մշակի" խմբագրատանը վաճառվում են
ՀԵՏԵՒԵԱԼ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.
1) Հասարակութեան նեցուկները, Հ. Իբսէնի, թարգ. Լ. Բաբայեանի 50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, դրամ. Էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Բ-ի 40 կ.
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Արէլեանի . . . . . 60 կ.
4) Ուսանողներ, 3 գործ., Գ. Բաշինջաղեանի . . . . . 50 կ.
5) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ. Ա. Առաքելեանի . . . 50 կ.
6) Մազդա, դրամա, 5 գործ. Լեոն Մանուէլեանի . . . . . 40 կ.
Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միմիայն 15%։
Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ", Тифлисъ.
(4) 0—7

ԲԺԵՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիական Ռիշիլիի համալսարանի պրոֆ. Գօղէրի։
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի և կաշւոյ հիւանդութիւններով՝ առ. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6։ Սօլալայ, Տրիշնեվսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տէլէֆօն 10—58.
(Հ. տ. կ.) առ. 875. 50—30

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԾՈՒՐԱԶԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

19 Նոյեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Աւգանիստանի էմիրը դիմեց Հնդկաստանի փոխարքային մի նամակով, որի մէջ ճշդում է չեզոքութիւնը պահպանելու իր սկզբնական վճիռը։ Այդ տեսակ վճիռը միանգամայն համապատասխանում է սպասելիքներին, որովհետեւ էմիրը համարձիք է Թիւրքիայի սահմաններից դուրս բնակվող մահմէդականներին՝ թէ Թիւրքիան պատերազմ յայտարարեց վաղօրօք մտածված ծրագրով։ Այդպիսով Պարսկաստանում և Աւգանիստանում Թիւրքական ագիտացիան լիակատար պարտութիւն կրեց։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Մարշալ Ֆոն-դէր Գոլց-փաշան, համաձայն սուլթանի խնդրի՝ ուղղված Վիլհէլմ կայսրին, մեկնում է Կ. Պոլիս իր շտաբի հետ՝ Եգիպտոսի ռազմական գործողութիւնները ղեկավարելու համար։ Ֆոն-դէր-Գոլց-փաշան կանգ է առնելու Բուխարէստում։ Նրան ընդառաջ են գալու այստեղ Թիւրքիայի գերմանական միսիայի ներկայացուցիչները։

ՍՕՖԻԱ.—Թիւրք լրագիրները հաղորդում են, որ Զմիւռնիայում բնակվող ռուսահպատակները, իբրև վրէժ այն միջոցների դէմ, որոնք իբր թէ ձեռք են առնվում Ռուսաստանում Թիւրքահպատակների վերաբերութեամբ, աքսորվելու են Դիարբէքիրի և Խարբէրդի վիլայէթները, նաև Զօրսի սանջակը։

(Լրագիրներից)

[illegible] էլ Թիւրք կառավարութիւնը աշխատում է թաքցնել ազգաբնակութիւնից պատերազմի դաշտում տիրող դրութեան իսկական պատկերը, այնու ամենայնիւ հատ-հատ տեղեկութիւններ Թիւրք զէնքի անաջողութեան մասին մտնում են ամբոխի մէջ։ Թէ այդ տեղեկութիւնները, թէ «Գերէնի» ստացած ճեղքուածը, նաև աւստրօ-գերմանական զօրքերի պարտութիւնների լուրերը յուսահատ վիճակ են ստեղծել սուլթանների մայրաքաղաքում։ Հասարակութեան և մամուլի մէջ արդէն ձայներ են լսվում յօգուտ անմիջապէս հաշտութիւն կնքելու և բանակցութիւններ սկսելու։

✦ Իգդիրից հեռագրում են «Ռ. Սլ.»-ին, որ Ջարդված Թիւրք զօրքերը դէպի Էրզրում փախչելու ժամանակ կոտորած են սարքել հայկական Զանղաս և Բենեաիկէ գիւղերում։ Վերջիններիս բնակիչների մեծ մասը կարողացել է իր ժամանակին փախչել ռուսական սահմանը։

✦ «Кав. Сл.»-ի թղթակիցը հեռագրում է Իգդիրից. «Վերադառնալով Դիադինի մօտից, համիդիէները կանգ առան Ուչ-Քիլիսէ գիւղում և այնտեղ մի շարք խժդժութիւններ գործեցին։ Առանձնապէս համիդիէները աւերածութիւններ կատարեցին պատմական հինաւուրց հայկական վանքում. նրանք իրանց ձիերը, թւով 1500 հատ, ներս տարան եկեղեցու բակը, եկեղեցին, խուցերը։ Տաճարը կողոպտվեց և սրբապղծվեց։ Վարդապետը գանգատվեց Դիադինի կայմակամ Մամէդ-բէկին և օգնութիւն ու պաշտպանութիւն խնդրեց։ Մամէդ-բէկը կանչեց համիդիէ օֆիցէրներին և հրամայեց անձամբ մաքրել որբապղծված տաճարը և յետոյ դուրս քշեց համիդիէներին գիւղից»։

✦ Իգդիրից հեռագրում են «Ռ. Սլ.»-ին. «Երբ մեր զօրքերը մօտեցան Ուչ-Քիլիսէին, Մամէդ-բէկը յայտնեց, որ անցնում է ռուսների կողմը։ Գիւղի բնակիչները մեր զօրքերին ցնծութեամբ դիմաւորեցին. դուրս եկան խաչ ու խաչվառով, քահանաները մաղթանք կատարեցին յետագայ յաղթութեան համար։ Կանայք և երեխաները նոյն իսկ համբուրում էին ռուս օֆիցէրների և կօշակների ձիերին։ Երբ բերին Մամէդ-բէկին, հայերը բուռն երախտագիտութիւն յայտնեցին նրան, ընկնելով նրա ոտները և համբուրելով նրա ձեռքերը։ Ռուս զինուորը զարմացել էր այդ տեսարանից, բայց իմանալով, որ հայերը ողջունում են՝ յանձին Մամէդ-բէկի՝ իրանց փրկչին համիդիէների բռնութիւններից, հրամայեց ազատել նրան և ուշադրութեամբ վերաբերվեց դէպի նա»։

✦ Հոմից տեղեկացնում են, որ եթէ Թուրքիան տարածէ իր ռազմական գործողութիւնները Սուէզի ջրանցքի կողմը, Իտալիան պատերազմ կը յայտարարէ։

✦ Հեռագրում են, որ Թիւրք բժիշկները հրաժարվում են օգնել հայ վիրաւորներին։

✦ Բուլմինան կարգադրել է այլ ևս բէնզին չարտահանել Թիւրքիա։

✦ «День» գրում է. «Թիւրքիայի պատերազմի հետեանքում, ի միջի այլոց, պէտք է սպասել աւտօնօմ Արաբիա՝ Անգլիայի հովանաւորութեան ներքոյ, և աւտօնօմ Սիրիա՝ Ֆրանսիայի հովանաւորութեան տակ»։

✦ Պաղեստինում 5000 հրէաներ հալածանքից խուսափելու համար թիւրքաց հպատակութիւն են ընդունել։

✦ Թիւրքիայում զէնքի են կանչված 17, 18 և 19 տարեկան պատանիները։

✦ Ադրիանապօլսում շարունակվում են արիւնալի ընդհարումներ գերմանացիների հետ։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

✦ Իգդիրից հեռագրում են «Բակու»-ին, որ այնտեղ գալիս են բազմաթիւ հայեր այն նպատակով, որ միջնորդեն հրացան ստանալու ինքնապաշտպանութեան համար։

✦ Քիւրդերը սաստիկ վախենում են ֆէդայիներից և, երեխայ ու կին հաւաքած, լեռներն են բարձրանում։

✦ Ղարասունի մօտ հայ կամաւորները ջարդ են տուել Թիւրքաց զօրամասին (<Ռ.>)

✦ Լուրերի համաձայն, Թիւրքերը մտրթել են Ալաշկերտի հայոց եպիսկոպոսին։

✦ Բ. Դուռը որոշել է իր պաշտօնեաներին ուղարկել հայոց և տիեզերական պատրիարքարանների նիստերին ներկայ լինելու։ Պատրիարքները հրաժարվել են նրանց նիստին թողնել։ Թիւրքերը բռնի ոյժ են գործ դրել։

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

Քիւրդական զօրքերը

Մինչդեռ նախորդ պատերազմներում քիւրդերը մասնակցում էին Թիւրքաց զօրաբանակում որպէս կամաւորներ և աղա սոսկ Թալանչիներ, ներկայ պատերազմում քիւրդերը հրապարակ են եկել որպէս Թիւրք բանակի հեծելազօրքի կանոնաւոր մասեր՝ ժամանակակից հրացաններով, ռազմամթերքով և կազմակերպութեամբ։ Սուլթան Աբդիւլ-Համիդի ռազմագիտական և քաղաքական այս ժառանգութիւնը «Համիդիէ» անուան տակ թւական կողմից ներկայացնում է իրանից բաւական պատկառելի ոյժ։ Դեռ ևս 1899 թւականին քիւրդ համիդիականները կազմում էին խաղաղ ժամանակ 70,000 այրուձի կամ 140 գունդ, 1904 թւականին այդ թիւը աւելացաւ 32 նոր գնդերով, որոնց մէջ մտան նաև Սրվազի չերքեզները նոյն համիդիական կազմակերպութեամբ, իսկ վերջին զօրաժողովի ժամանակ քիւրդ-չերքեզական հեծելազօրքի ընդհանուր թիւը պէտք է հասնէր 100 հազարի։ Ճիշդ է, բալկանեան վերջին պատերազմում համիդիական հեծելազօրքը սերբ-յոյն-բուլգարական կռիւներում կորցրեց ընդհանուր թւի կէսից աւելին, և այժմ 100 հազարանոց հեծելազօրքը դոյութիւն ունի աւելի թղթի վրա, զինուորական շտաբի բեկացիաներում, սակայն ինչ և լինի՝ նոյնիսկ 50 հազարանոց քիւրդական հեծելազօրքը մի պատկառելի թիւ է, եթէ... եթէ միայն քիւրդը ընդհանրապէս ներկայացնի իրանից ռազմական կամպակտ, դիսցիպլինայի ենթարկված միութիւն։ Սակայն ահա այդ բանն է, որ պակասում է նրան։ Դրան ապացոյց մենք ունենք վերջին կռիւները՝ Բայազիդի, Դիադինի, Կարաքիլիսէի, Դուտախի և Խանասորի շրջանում. մեր զօրքի քիւրդական հեծելազօրքի հետ ունեցած ընդհարումներում մեր առաջապահ նոյնիսկ փոքրաթիւ հեծեալները, հանդիպելով համիդիական 1000 և աւելի հոգուց բաղկացած իրը թէ կանոնաւոր գնդերին, մի քանի ժամվայ կռիւների մէջ ցան ու ցրիւ են արել նրանց և քշել կամ լեռները կամ դաշտավայրերը։

Այս երեւոյթը պարզ ապացոյց է, որ քիւրդական համիդիէն, չը նայած իր աւելի քան 25 տարվան գոյութեանը, չի կարողացել զինուորական մարզված զօրամասի կազմակերպութիւնն ստանալ, այլ մնացել է դրեթէ նոյն հրոսակախումբը, միայն թէ այժմ աւելի լաւ զինված։ Աւելացրէք դրա վրա քիւրդական բազմաթիւ ցեղերի և ցեղապետների միջև գոյութիւն ունեցող թշնամական յարաբերութիւնները, թալանի ու աւարառութեան ծարաւը, ազգային-քաղաքական գիտակցութեան բացակայութիւնը, ցեղապետներից շատերի կաշառվելու թուլութիւնը, և մեզ համար պարզ կը լինի, որ Թիւրքաց զօրաբանակի գլխաւոր հրամանատար Իզզէթ-փաշան իր տրամադրութեան տակ ունի մի շատ անվստահելի ռազմական ոյժ, որը պէտք է գալու նրան՝ միայն ալան-թալանի ժամանակ և որին պաշտպանելու համար Իզզէթ-փաշան ստիպված եղաւ ուղարկել կանոնաւոր հետեակ զօրքի թնդանօթային բրիգադան, ինչպէս այդ տեղի ունեցաւ ամսիս 13-ին Դուտախի մօտ, որ և մեր առաջապահների հետ ունեցած կռուում մերոնք խլեցին հէնց այդ նոյն թընդանօթները և Եփրատի հովտում առաջ գնալու համար ճանապարհ հարթեցին։

Քիւրդական համիդիէի այսօրինակ ընոյթի մասին շատ գրվեց նաև բալկանեան վերջին պատերազմի ժամանակ, սակայն այդ բանը չարգելեց, որ համիդիէն մնար իր բոլոր պակասութիւններով։ Սալ-Ման

ՕԳՆԵՑԷՔ ՄԻՄԱՆՈՐ ՎԻՐԱՎՈՐՆԵՐԻՆ

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Երեկոյեան հաղորդագրութիւն)

19 Նոյեմբերի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Նոյեմբերի 19-ին զօրաճակատներում խոշոր ընդհարումներ տեղի չունեցան։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

19 Նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Նոյեմբերի 18-ին բոլոր զօրաճակատներում տիրեց համեմատական լռութիւն։ Լօվիչի շրջանում կռիւները թէև շարունակվեցին, բայց աւելի նուազ

ՄԱՍՆԱՎՈՐ ԼՈՒՐԵՐ

ԱՂՈՒՆՔԻ ԵՎ ԱՆՁՐԵՎԻ ՄԱՍԻՆ

Ամերիկայի Նահանգների Գերագույն դատարանը հրամայեց Ֆորդ ընտանիքին հանձնել Անձրևի մասին հեղինակային իրավունքը։ Դատարանը գտավ, որ Անձրևը ոչ թե բնության երևույթ է, այլ Ֆորդ ընտանիքի ստեղծագործությունը։ Դատավճռի հիմնավորումներից մեկում ասվում է, որ Անձրևը սկսվել է 1914 թվականի հոկտեմբերի 10-ին, երբ Ֆորդ ընտանիքի ավագը հրամայել է ամպերին լվանալ երկինքը։ Դատարանը նաև պարզաբանեց, որ Անձրևի հեղինակային իրավունքը չի տարածվում հանրային հանդիսությունների վրա, եթե դրանց մասնակիցները հագնված են անձրևանոցներով։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՐԵՔ

Ֆրանսիայի Գերագույն դատարանը հայկական համարեք է ճանաչեց ֆրանսերեն «Merci» բառը։ Դատավճռի հիմնավորումներից մեկում ասվում է, որ «Merci» բառը ֆրանսերենում գործածվում է ոչ միայն «շնորհակալություն» իմաստով, այլև «ներեցեք», «ներողություն», «բարի գալուստ» իմաստներով։ Դատարանը գտավ, որ հայերենում «Merci» բառը գործածվում է միայն «շնորհակալություն» իմաստով, հետևաբար հայերենը չի խախտվում։

ՄԱՐԴԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

Ամերիկայի Գերագույն դատարանը սահմանափակեց մարդկանց սահմանը։ Դատավճռի հիմնավորումներից մեկում ասվում է, որ մարդը չի կարող ապրել 42 տարուց ավելի, եթե նրա հասակը 10 մետրից ավելի է։ Դատավճռի հեղինակները նշեցին, որ 1914 թ. հոկտեմբերի 10-ին Ֆորդ ընտանիքի ավագը հրամայեց լվանալ երկինքը։ Դատարանը գտավ, որ հրամանը չի կարող վերաբերել մարդկանց, քանի որ նրանք չունեն հասակ։

ՄԱՐԴԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

Ամերիկայի Գերագույն դատարանը սահմանափակեց մարդկանց սահմանը։ Դատավճռի հիմնավորումներից մեկում ասվում է, որ մարդը չի կարող ապրել 42 տարուց ավելի, եթե նրա հասակը 10 մետրից ավելի է։ Դատավճռի հեղինակները նշեցին, որ 1914 թ. հոկտեմբերի 10-ին Ֆորդ ընտանիքի ավագը հրամայեց լվանալ երկինքը։ Դատարանը գտավ, որ հրամանը չի կարող վերաբերել մարդկանց, քանի որ նրանք չունեն հասակ։

ԱՆՁՐԵՎԻ ԴԵՊ ԼԵՌՆԵՐ

Ամերիկայի Գերագույն դատարանը Անձրևի դեպ լեռներ է ճանաչեց։ Դատավճռի հիմնավորումներից մեկում ասվում է, որ Անձրևը ունի բարձրություն, լայնություն և խորություն։ Դատարանը գտավ, որ Անձրևը չի կարող ապրել հարթ տեղում, հետևաբար նրա համար անհրաժեշտ է լեռներ։ Դատավճռի հեղինակները նշեցին, որ Անձրևի դեպ լեռները ունեն 150 մետրանոց բարձրություն։

ՍԱՆԴՈՒՂ.—Դիտորդներ Ամերիկայի Գերագույն դատարանի դատավճռի մասին։

18 հոկտեմբերի

(Գրված. Հեռ. Գրասլ.)

ՄԱՍՆԱՎՈՐ ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱՐԵՔԻ ՄԱՍԻՆ

Ամերիկայի Գերագույն դատարանը հրամայեց Ֆորդ ընտանիքին հանձնել Անձրևի մասին հեղինակային իրավունքը։ Դատարանը գտավ, որ Անձրևը ոչ թե բնության երևույթ է, այլ Ֆորդ ընտանիքի ստեղծագործությունը։ Դատավճռի հիմնավորումներից մեկում ասվում է, որ Անձրևը սկսվել է 1914 թվականի հոկտեմբերի 10-ին, երբ Ֆորդ ընտանիքի ավագը հրամայել է ամպերին

ձգտումներով կէս դարէ ի վեր կապուած էր Ռուսիոյ և վայելած Ռուսիոյ օժանդակութիւնը։ Չէ որ Ռումանիան 1877-ին կողք կողքի ռուս զինուորին հետ կռուած էր Թիւրքիոյ դէմ. չէ որ անցեալ տարի Ռումանիան՝ Ռուսիոյ աջակցութիւնով միայն՝ կարողացաւ կրել Դոբրուջան. չէ որ ռումէն ժողովուրդը պատիւը ունեցաւ այս տարի (1914) օգոստոս 14-ին Ցարի այցելութիւնն ընդունելու և անդամ մը ևս ռուս-ռումէնական փոխ-յարաբերութիւնները սերտելու։ Եթէ այս բոլորը իրականութիւններ են, ուրեմն ինչու Ռումանիան, վստահ ըլլալով իր և հետևաբար երբեկ համաձայնութեան վերջնական յաղթութեան, չքաշեց իր կէս միլիոնոց բանակը Աւստրիոյ դէմ՝ գրաւելու համար Տրանսիլվանիան ու Բուկովինան. ինչու չկարողացաւ իր քաղաքական հաւատամքը, մեծ Ռումանիա մը ապահովելու թէզը գործնականացնել զէնքի զօրութիւնով, այլ մնաց չէզոք և միշտ անորոշ դրութեան մէջ և սպասարկու օրքան Ռուսիոյ, նոյնքան և ապագի Գերմանիոյ։

Ահա քանի մը պատճառներ։

ա) Ո՛չ մէկ ուրիշ տեղ գերման էմիսարները այնքան ուժեղորէն կազմակերպուած են, օրքան Ռումանիոյ մէջ, որոնք, ի հարկէ, յարմարագոյն պատեհութիւնն կը սպասէին իրենց վստահուած դերը գործադրելու համար։ Հոս, Ռումանիոյ մէջ, ամեն շրջանակ իր գերմանացուութիւնն ունի և գերմանացիօրէն մտածողները։ Ի՞նչ ըրին, ինչ միջոցներու դիմեցին, պիտի հարցուի։ Սոյն գաղտնի վոհմակին առաջին գործն եղաւ ժողովրդական մամուլի օրգանները միլիոններով գնել և ի նպաստ Գերմանիոյ արտայայտուիլ։ Հրապարակի վրայ գտնուած բոլոր տպագրական մեքենները գնեցին, որպէսզի հակառակ օրգանները դադրեցնեն իրենց հակագերմանական հրատարակութիւնները՝ մեկն չգտնելով։ Արտաքոյ-զական ու ներքոյզական միութիւնները կազմելով աշխատեցան բէնդն հայթայթել Աւստրիոյ և Գերմանիոյ։ Թիւրքիոյ համար զանազան քանակութիւնով և զանազան անուններու տակ եկած զինուորական ու ռազմական գործիքները փոխադրեցին Թիւրքիա։ Հեղինակաւոր գրոյներն ու բանախօսները վարձելով փորձեցին հասարակութիւնը և նոյն իսկ քաղաքական շրջանները համոզել, թէ Գերմանիան անպայման կը յաղթէ և ան արդէն երկու տարուան պատրաստութիւն տեսած է։

Աւելին կայ. իրենց ձեռքն առին այնքան տարածուած կինեմատոգրաֆները և աշխատեցան ամեն տեղ և ամեն գնով Գերմանիոյ զինուորական անընկճելիութիւնը ներկայացնել, գերմանական ֆիլմերով, որոնց մէջ միշտ մեծագոյն տեղը կը բռնէին Ցեպպելինն ու 42 սանտիմտր լայնաբերան թնդանօթները։

բ) Կան հասարակական գործիչներ, որոնք կը պնդէին ու կը պնդեն, թէ Ռումանիա իր 30 տարուան դաշնակցութիւնը պէտք է յարգէ տառ առ տառ Աւստրիոյ և Թիւրքիոյ հետ։

գ) Տեղւոյն առևտրական մեծ տուներն ու բանկերը, ընդհանրապէս հրեական ու աւստրիական ըլլալով, պատերազմի առաջին վայրկեանին սպառնացին նիւթական սով ստեղծել և Ռումանիան իրենց դրամի ուժովը քշել Գերմանիոյ գերիշխանութեան տակ, այսինքն ուզեցին երկրորդ Թիւրքիա մը ստեղծել Բալկաններուն մէջ։

Ցաշողեցա՞ն. ոչ։ Ռումէն դիւանագիտական շրջանակները փորձառու են և հեռատես։ Հասարակական անկեղծ գործիչները ոչ թէ միայն չտարուեցան ստեղծուած հոսանքէն, այլ և ստեղծեցին աւելի ուժեղ հակահոսանք, և ապահով ու ինքնավստահ վարեցին իրենց քաղաքական փոխ-յարաբերութիւնները, հաստատ ու վերջնական հաստատութեան մը գալու համար Բուլգարիոյ հետ, որ այսքան թշնամօրէն կը վերաբերուի դէպի Ռումանիան։

Ռումանիա իր Դանուբի դրացիները շահելու, անոնց համակրանքն իր կողմը կորզելու համար շատ զոհողութիւններ ըրաւ և կընէ։ Ռումանիա տրամադիր է Դոբրուջայի մէկ մասը ձգել Բուլգարիոյ, պայմանով որ ան ալ իր կարգին Ռումանիոյ զործունէութեան արգելք չըլլայ և աւտրոռումանական պատերազմի մը միջոցին չը միջամտէ թշնամօրէն, որպէսզի Ռումանիան կարենայ իր 500,000 զինուորներով կռուիլ Աւստրիոյ դէմ և ամեն գնով գրաւել Բուկովինան ու Տրանսիլվանիան, նոյն ատեն մեծագոյն հարուածը տալով գերմանական շահերուն։

Ռումանիա Իտալիոյ հետ համախորհուրդ կը գործէ։ Ռումէն պատուիրակութիւնը նոր վերադարձաւ Հռովմէն, և կը խորհուի, թէ սոյն պատուիրակութիւնը ոչ թէ միայն աշխատեցաւ ռումէնօ-իտալական շահերու պաշտպանութիւնը ապահովել, այլ և Բուլգարիան իր հակառուս քաղաքականութենէն հեռացնել, Սերբիոյ, Յունաստանին և Ռումանիոյ զիջումներ ընել տալով և յետոյ զայն զինել թիւրքական սուլթանին դէմ, Ռումանիոյ ազատ գործունէութեան հրապարակ մը ստեղծելու համար, քանի որ Ռումանիան որոշած է կռուիլ, բայց Ռուսիոյ հետ և Ռուսիոյ թշնամիներուն դէմ ու երբեկ համաձայնութեան շահերու համար։

Լեոն Շահազիզեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋը

I

Ներկայ պատերազմը օրքան որ ազգային շրջանակէն դուրս է, օրքան որ աւելի համաշխարհային է, անուշտ, նա առաւել ևս ժողովրդական ու ազատագրական բնոյթ է ստացել։ Սակայն նման օրակարգները կորցնում են իրանց միտքն ու բովանդակութիւնը, եթէ որոշ չափով չեն բացատրվում ու լուսաբանվում։ Ըստ երևոյթին՝ այժմեան պատերազմող պետութիւնների պահանջներն ու իդէաները համապատասխան են թուում, քանի որ մի կողմից կուլտուրական Գերմանիան, Աւստրօ-Ունգարիան ու բարբարոս Թիւրքիան են կռուում, իսկ միւս կողմից նոյնպէս կուլտուրական Անգլիան, Ֆրանսիան, Բելգիան, Եապոնիան և Ռուսաստանը։ Վերջինս վերջին երկու 10-ամեակում հակայական քայլեր է արել ազատվելու եւրոպական պետութիւնների և զլխաւորապէս Գերմանիայի տնտեսական կախումից։ Այսպէս դնելով հարցը՝ մենք զրկվում ենք հնարաւորութիւնից թափանցելու ներկայ պատերազմի հիմքերը և լուսաբանելու մեզ համար հարցը, որովհետև յաղթանակի գրաւականը կուի հիմքերը գիտակցելու մէջ է, որովհետև մարդու կամքը ազատ է զգում իր գործունէութեան մէջ այն ժամանակ, երբ նոյն մարդու միտքը գիտակցում է իր գործունէութեան էութիւնն ու հիմքը։

Պատերազմները ներկայ հասարակարգում, անկասկած, մղվում են պետութիւնների կողմից որոշ տնտեսական-սոցիալական նպատակների համար։ այս հարցի վերաբերմամբ վերացել են տարաձայնութիւնները. այլ ևս չեն վիճում մարդիկ, որ մեր դարում պատերազմները լինում են զուտ աշխարհակալական նպատակներով, միապետի և կամ թէ պետութեան մէջ գերիշխանութիւն ստացած որոշ խմբակցութիւնն փառամոլութեան յագուրդ տալու, քանի որ պատերազմները տանում են ժողովուրդները, և նման պետական ակտերի ժամանակ, ինչպէս պատերազմն է, հաշի է առնվում ժողովրդական ներկայացուցիչների կամքը։ Չը կան այլևս բացարձակ միապետութիւններ, որոնք ժողովրդի բաղդի հետ էին խաղում, յաճախ իրանց դինաստիական շահերն ու ախորժակները յագեցնելու։ Ներկայ պատերազմը աւելի քան ժողովրդական է, որովհետև նախ նրան մասնակցում են մասսաները և երկրորդ՝ այս պատերազմում, աւելի քան մի այլ պատերազմում, հասարակական շահերը զգալիօրէն շօշափվել են. իրաւացի կերպով նկատեց մի գերմանացի անտեսագէտ, որ «այժմ այս համաշխարհային պատերազմում պետութիւնները չեն կարող իրանց զօրքի հետ քաղաքականութեամբ վարվել։ ժողովրդական տարրերը իրանց կենքը դնելու են առհասարակ զօրքի վրա, ինչպէս և միաժամանակ զօրքը պիտի թողնէ իր կենքը հասարակութեան վրա։ Բայց երբ տալում է, թէ պատերազմները տեղի են ունենում տնտեսական հողի վրա, այդ չէ նշանակում, որ պատերազմի ժամանակ հաշվեկշռով են զբաղվում ու համարիչ ձգում։ պատերազմը թշնամիների և գնդակների հետ ունի և իդէական կողմը, մանաւանդ երբ խօսքը վերաբերում է նրա կազմակերպման ընթացքին՝ մի քանի տասնեակ տարիների ընթացքում»։

Ցայտնի է, որ Գերմանիայում զինուորական մեծ դրականութիւն է ստեղծվել 40 տարվայ ընթացքում, ինչպէս և Աւստրիայում, ուր տասնեակ տարիների ընթացքում գերմանական ցեղի ֆիզիքական ու մտաւոր առաւելութիւններն էին դրուատում, բոլոր միւս ցեղերի դիմաց, միաժամանակ թուանաւորում նոյն գերմանացիների միտքը, թշնամաբար տրամադրելով նրանց՝ անգլիական ցեղի, օսմանական ցեղի և սլաւոնական ցեղի դէմ. ամեն ինչ համընթաց էր տարվում Գերմանիայում, թէ պրօպագանդը յօգուտ պատերազմի և թէ սպառազինումը։ Այդ իդէական կողմը լրանում է նրանով, որ պատերազմի ժամանակ մարդիկ գլխաւորապէս խօսում են քաղաքականութեան, ազգութեան և յաղթութեան մասին, որպէս պատերազմի հիմքում դրված սկզբունքի իրագործման ամենամեծ միջոցներ։ Ներկայ պատերազմը, ինչպէս ասացինք, առաւելապէս ժողովրդական է և ազատագրական ինչպէս Եւրոպայի, նոյնպէս և Ռուսաստանի համար. այդ մենք կը տեսնենք յետոյ, երբ պարզենք մեզ համար, թէ ինչպէս կարելի է որակել ներկայ պատերազմը, ինչ պատճառներ ունի նա և ինչպէս է կազմակերպվել։

Այն սոցիալական-արդիւնաբերական ընթացքը, որի մէջ ազգում է ժամանակակից Եւրոպան, սկիզբն է առել ի՛նչուց անտի. Ամերիկայի գիւտից դեռ առաջ, եւրոպական ազգերից առաջինը Պորտուգալիան էր, որ սկսեց իր գաղութային բռնի քաղաքականութիւնը Արևելեան-Հնդկաստանի վերաբերմամբ, որը առիթ դարձաւ, ժամանակագրօրէն, եւրոպական բոլոր պետութիւնների հակամարտութեան՝ գաղութային քաղաքականութեան հողի վրա. Սպանիան, Հոլանդիան, Ֆրանսիան ու Անգլիան էին՝ Պորտուգալիայից յետոյ՝ որոնք իրար ձեռքից խլեցին գաղութները. այդ պետութիւններից ամենափայլուն աջողութիւնն Անգլիայն էր վիճակվել։ Որը, վերջին անգամ, քաղաքական նպատակոր հանգամանքների շնորհիւ, երբ Ֆրանսիան ու Գերմանիան 1871 թուի Ֆրանս-պրուսական պատերազմով էին զբաղված, մէկիկ-մէկիկ գրաւեց գաղութները և տէր դարձաւ Հնդկաստանին, Նոր-Զելանդիային, Աւստրալիային։

80-ական թուականներից յետոյ՝ շնորհիւ եւրոպական պետութիւնների մէջ տեղի ունեցած արդիւնաբերական յեղաշրջման, տենդագին կերպով սկսվում է այդ պետութիւնների կողմից աֆրիկական հողերի գլօնիզացիան և պատերազմները Զինաստանի հետ. վերջինիս հետևանքն էր առևտրական դաշինքը մի կողմից Ֆրանսիայի և Անգլիայի, միւս կողմից Զինաստանի միջև։ Ահա այն ընդհանուր տրամադրութիւնը, որը եւրոպական պետութիւնների քաղաքականութեան հիմք ծառայեց և առիթներ ստեղծեց պատերազմների համար։

Մեր դարի երեք գլխաւոր պատերազմները—սպանօ-ամերիկական, անգլօ-բուրական, ռուս-եապօնական—որոնք կլանեցին 12 միլիարդ ֆրանկ, արդիւնք էին գաղութային այդ քաղաքականութեան։ Այդպիսի քաղաքականութեան արդիւնք է և ներկայ համաշխարհային պատերազմը Գերմանիայի կողմից։ դրա մէջ կասկած չի կարող լինել. աւելին կասենք. ներկայ պատերազմը Գերմանիայի համար գաղութներ ձեռք բերելու և նոր ձեռնտու առևտրական դաշնագրեր կնքելու համար է։ այդ պարզ արտայայտել է գերմանական կառավարութեան ներկայացուցիչը պատերազմի յայտարարման օրերին, Ֆրանսիայի վերաբերմամբ, թէ «մեզ հարկաւոր չէ Ֆրանսիան, այլ մեզ նրա գաղութները են հարկաւոր»։ ուրիշ խօսքով՝ ներկայ պատերազմում Գերմանիան նոր տերիտօրիաներ գրաւելու ձգտումն ունի։ ի հաշիւ իր թշնամի պետութիւնների նա ուզում է ամրապնդել իր դիրքը համաշխարհային շուկայում և տարածել իր հեգեմոնիան։ Գերմանական կառավարութեան այդ թաքուն նպատակները, ներկայ պատերազմում, արտայայտվում են նրա ազգային ձգտումներ մէջ, գերմանական ազգի կուլտուրայի գերիշխանութեան մէջ, որպէս ընդհանուր մարդկութեան լուսաւորութեան խնդիր, ինչպէս հաստատում են մեզ գերմանական գիտութեան ներկայացուցիչներն իրանց ընդհանուր դեկլարացիայի մէջ։ Պէտք է պարզել, որ խաչակրաց այս նոր արշաւանքը Գերմանիայի կողմից երբեկ համաձայնութեան դէմ՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ գերմանական մեծ հողատէրերի, իւնկերների և արդիւնաբերողների շղարշված շահերի առաջխաղացումը։ Տերիտօրիալ մեծ պատութիւնները հնարաւորութիւն են ստանում աւելի մեծ չափով ու աւելի լաւ իրագործելու պետական խնդիրները, որ սօցիալապէս բարձրացնում է հասարակութեան տնտեսութիւնն ու դիրքը, քան թէ փոքրածաւալ պետութիւնները։ Այդ տեսակէտից, ժողովրդական տարրերի համար տերիտօրիալ ընդարձակումներն ունեն իրանց նշանակութիւնը, ինչպէս և պատերազմը։ Ֆրանսիան վաղուց է ներել Գերմանիային 5 միլիարդ ֆր. պատերազմական տուգանքը, բայց նա երբէք չի մոռանում Էլզաս-Լոտարինգիայի կորուստը։

Աւելի է պարզում խնդիրը եւրոպական պետութիւնների քաղաքականութեան կուրսը Թիւրքիայի վերաբերմամբ, ուր օրպէս մի ֆոկուս անդրադառնում էր Եւրոպայի գաղութային քաղաքականութիւնը արևելեան շուկաների վերաբերմամբ։ Քաղաքականութիւնը եւրոպական պետութիւնների մէջ Թիւրքիայի վերաբերմամբ վերջին 30 տարվայ ընթացքում պարզապէս ցոյց է տալիս նախ ընդհանուր Եւրոպայի ընթացքը և ապա նրա առանձնակի պետութիւնների շարժումները միջազգային քաղաքականութեան մէջ։ Շատերը այն կարծիքին են, որ Թիւրքիայի պատերազմի խառնվելը մի աւանտիւրա է էնվերի կողմից և արդիւնք՝ գերմանական պրովոկացիայի։ Նման հասկացողութիւնը Թիւրքիայի դերի մասին ներկայ պատերազմում արդիւնք է մակերեսային դատողութեան։ Եթէ ուզում ենք իմանալ, թէ ինչու համար է ներկայ պատերազմը, պէտք է կարծել, որ նա ընդհանրապէս գաղութների համար է և մասնաւորապէս Թիւրքիայի։

Թիւրքիան եւրոպական կուլտուրայի համար մի արգելք էր, որ ստեղծվեց նրա հանդէպ գալու օրվանից պատմութեան բեմի վրա. նա տիրելով Կ. Պոլսին, Եգիպտոսին, ամբողջ Միջերկրական ծովին և Սև ծովին ու Կովկասին՝ փակեց վերջնականապէս Ասիայի դռները Եւրոպայի առաջ. որպէս մի մշտական սարսափ՝ նա սպառնում էր խեղդել Եւրոպային։ Սակայն միջին եւրոպական ժողովուրդների արշաւանքները ետ մղեցին օսմանցիներին Եւրոպայից. ռուսական արշաւանքները խլեցին նրանից Ասիայի մի դուռը՝ Կովկասը. իսկ վերջին շրջանում Եգիպտոսի փաստացի գրաւումը անգլիացիների կողմից փրկեց մեծ ճանապարհը դէպի Հնդկաստան։ Այն ժամանակ, երբ Ռուսաստանը մի կողմից՝ Միջին Ասիայից մօտեցաւ Հնդկաստանին, իսկ միւս կողմից Սուէզի ջրանցքի բացումը Հնդկաստանը աւելի մօտեցաւ Ռուսաստանին, ահա այդ ժամանակ սկսվում է Անգլիայի և Ռուսաստանի հակամարտութիւնը։ Անգլիական քաղաքականութիւնը մինչև վերջին շրջանը դէմ է գնացել միշտ ռուսական քաղաքականութեան։ Հնդկաստանի կոթստան վախը ստիպեց Անգլիային կնքելու Թիւրքիայի և Պարսկաստանի անբաժանելիութեան դաշինքը իր և Ռուսաստանի միջև՝ Գերմանիայի օգնութեամբ. իսկ Սեվաստոպոլի պատերազմից յետոյ նա Ռուսաստանին, ինչպէս և որևէ այլ պետութեան, զրկեց պատերազմական նաւատորմի իրաւունքից Սև ծովի վրա. դրանով նա ամրապնդեց իր դիրքը և ապահովեց իրան ռուսական վտանգից։

Սակայն վերջին տարիներում, երբ Ռուսինան և Բալկարիան ապացուցեցին, որ կարողանում են իրանց սեփական քաղաքականութեամբ զեկավարվել՝ չազդվելով Ռուսաստանից, երբ տեսաւ, որ գերմանական տակտիկան Թիւրքիան շահագործութեան աղբիւր դարձնելով ապառնում է Կ. Պոլսին, երբ զգաց Ռուսաստանի կողքին Գերմանիայի վտանգը իր դիմաց, անգլիական քաղաքականութիւնը փոխեց իր կուրսը Ռուսաստանի վերաբերմամբ։ Ահա դրանից յետոյ Թիւրքիայի ամբողջութեան խնդիրը կորցրեց իր նշանակութիւնը Անգլիայի համար։ Գերմանիան, ընդհակառակը, երբ համոզվեց, որ իր աֆրիկական կալուածները աւելի քան թանգ են նստում իր վրա, 1878 թուից նա իր ուշադրութիւնը կենտրոնացնում է Մօտաւոր Արևելքի վրա. Վիլհելմ II-ի Մէկկա գնալը առաջին նշանակալից քայլն էր Թիւրքիան գերմանական կօլոնիա դարձնելու։ Գերմանիան միւս կողմից թոյլ չէր տալիս Աւստրիային շարժվելու դէպի հարաւ՝ Եգէյեան ծովը. և այսօր նա իր արտահանութիւնը Թիւրքիա հասցրել է պատկառելի թիւ. 1904 թուին Թիւրքիա է արտահանել Գերմանիան 75 միլիոն մարկի ապրանք։

Բալկանեան պատերազմի լուրը Անգլիային առանձնակի անհանգստութիւն չը պատճառեց. նա գուշակում էր Կ. Պոլսի առումը, բայց Գերմանիայի ու Աւստրօ-Ունգարիայի քաղաքականութեան ոյժը ետ կանգնեցրեց բոլգարներին, ու Թիւրքաց զօրքը ետ դրաւեց Ադրիանուպոլիսը, յօգուտ գերմանական ու աւստրիական շահերի. Կ. Պոլիսը այժմ այն դուռն է Գերմանիայի համար, որը ապահովում է նրա համար Փոքր-Ասիայի աւազանը և նրա Միջագետքի բամբակի տնկարանները ու ճանապարհը դէպի Պարսից ծոց. բացի այդ, Կ. Պոլիսը այն հանգոյցն է, որտեղից գերմանացիք պիտի սպառնան անգլիական գաղութներին Սուէզի ջրանցքով. այսպիսով Կ. Պոլսի շնորհիւ անգլիական գաղութները աւելի են մօտենում Գերմանիային։ Պարզ է, որ Թիւրքերի դրութիւնը յեղեղուկ է, կրիտիկական, որ նոյն իսկ գերմանական յաղթութիւնը չի խոստանում Թիւրք ազգի յաղթութիւնը, այլ ընդհակառակը։ Ահա թէ ինչու Գերմանիան մի կողմից ուզում է ընկճել Ֆրանսիային ցամաքի վրա, չլաւել վտանգը արևմուտքից, անցնել ծովը՝ անգլիական գաղութների ճանապարհը վտանգելու, իսկ միւս կողմից զրաւել Ռուսական Լեհաստանը ու ջանք է թափում Թիւրքիայի ձեռքով շաղանակներ հանել իր գաղութային նպատակների համար։

Ալ. Մ. Աղաջ.

Մոսկվա

մութիւնը, մոլորված. մէկը միւսին էր նայում. և չը գիտէին ինչ անել... ոչ ոք չը գիտէր ինչպէս դուրս գալ այդ անել դրութիւնից։

— Բարի մարդիկ...,—նորից լսվեց նրա՝ արցունքներից խեղդվող ձայնը։

Մանուկը գրկել էր հօր պարանոցը և վախեցած՝ նայում էր իրանց շրջապատած ամբոխին և ոչինչ չէր հասկանում։

Ամբոխի միջից յանկարծ լսվեց մի ձայն.

— Տուր ինձ...

Հրելով նա ճանապարհ բացեց, մօտեցաւ հօրն ու որդուն։

Այդ միջոցին խփեցին երրորդ զանգը, վագոնների լսվեցին «ուռայ», երգի ձայներ, որոնք խառնվեցին կայարանի աղմուկին՝ մի ընդհանուր ոռնցի նման։

Լսվեց շոգեկառքի սուլոցը, վագոնները աղմուկով կպան իրար, գնացքը ցնցվեց...

— Տուր ինձ...,—ասացին պարոնը, ձեռքը մեկնեց դէպի երեխան, օրը ընդդիմամբ զգալով, որ ուզում են իրան խլել հօր գրկից, վախեցած, անբնական ձայնով ճչում էր ու աչքերով մեկնեց երեխան։

Խլեցին նրան հօր գրկից...

— Մօր անունը... հացէն...

— Լազարեան փողոց, համար 19, Մարիամ...

Մի անգամ էլ լսվեց սուլոցի ձայնը... «ուռայ» թնդիւնը խլացրեց անիւների դղրդոցը, որ դանդաղ հեալով սկսեց առաջ ընթանալ։

Նա մի քանի քայլ վազեց ու էլի կանգ առաւ։

— Ո՞վ եք դուք... ձեր անունը, գոնէ մի թուղթ տուէք, որ երեխա ձեզ տաւի։

— Ապահով եղիր, բարեկամ, շտապիր, մի վախենար...

— Մնաք բարով, բալիկս...

Լալով մի անգամ էլ նա համբուրեց ու վազեց դէպի գնացքը։

Մանուկը մեկնել էր ձեռքերը դէպի հայրը, ուզում էր դուրս պրծնել այդ աւծանօթ մարդու գրկից, ձայնը կտրվել էր ու այդ ընդհանուր աղմուկի միջից երբեմն լսվում էր նրա՝ արցունքներից խեղդված խռպոտ ձայնը։

— Հայրիկ... հայրիկ...

— Մօրը կը յանձնես... Աստուծոյ սիրոյն, ասացէք, ես գնացի...—մի անգամ էլ լսվեց նրա ձայնը վագոնի միջից...

— Բարի ճանապարհ...

Գնացքը հեռանում էր. նա խօսում էր, ձեռքերով շարժում, բայց այլ ևս ոչ մի խօսք չը լսվեց։

— Հայրիկ... հայրիկ...

Ներկայ զանվողներից շատերը լալիս էին, տեսնելով այդ թշուառ մանուկը, որին ոչ մի կերպ չէին կարողանում հանգստացնել։

Գնացքը անհետացաւ։

Նա երեխան գրկին կանգնած էր։

Մարդիկ, կանայք շրջապատել էին նրան, այս ու այն կողմից տիկիններ, օրիորդներ՝ արցունքները աչքերին՝ քաղցրաւեսներ էին մեկնում երեխային, համբուրում. բայց նա ուշաթափելու չափ ճչում էր, չանգռտում դէմքն ու կանչում.

— Հայրիկ... հայրիկ...

Միքայէլ Մանուկեան

զրաքանութիւնը մինչև վերջին շրջանը դէմ է գնացել միշտ ռուսական քաղաքականութեան։ Հնդկաստանի կոթստան վախը ստիպեց Անգլիային կնքելու Թիւրքիայի և Պարսկաստանի անբաժանելիութեան դաշինքը իր և Ռուսաստանի միջև՝ Գերմանիայի օգնութեամբ. իսկ Սեվաստոպոլի պատերազմից յետոյ նա Ռուսաստանին, ինչպէս և որևէ այլ պետութեան, զրկեց պատերազմական նաւատորմի իրաւունքից Սև ծովի վրա. դրանով նա ամրապնդեց իր դիրքը և ապահովեց իրան ռուսական վտանգից։

Սակայն վերջին տարիներում, երբ Ռումինան և Բալգարիան ապացուցեցին, որ կարողանում են իրանց սեփական քաղաքականութեամբ զեկավարվել՝ չազդվելով Ռուսաստանից, երբ տեսաւ, որ գերմանական տակտիկան Թիւրքիան շահագործութեան աղբիւր դարձնելով ապառնում է Կ. Պոլսին, երբ զգաց Ռուսաստանի կողքին Գերմանիայի վտանգը իր դիմաց, անգլիական քաղաքականութիւնը փոխեց իր կուրսը Ռուսաստանի վերաբերմամբ։ Ահա դրանից յետոյ Թիւրքիայի ամբողջութեան խնդիրը կորցրեց իր նշանակութիւնը Անգլիայի համար։ Գերմանիան, ընդհակառակը, երբ համոզվեց, որ իր աֆրիկական կալուածները աւելի քան թանգ են նստում իր վրա, 1878 թուից նա իր ուշադրութիւնը կենտրոնացնում է Մօտաւոր Արևելքի վրա. Վիլհելմ II-ի Մէկկա գնալը առաջին նշանակալից քայլն էր Թիւրքիան գերմանական կոլոնիա դարձնելու։ Գերմանիան միւս կողմից թոյլ չէր տալիս Աւստրիային շարժվելու դէպի հարաւ՝ Եգէյեան ծովը. և այսօր նա իր արտահանութիւնը Թիւրքիա հասցրել է պատկառելի թիւ. 1904 թուին Թիւրքիա է արտահանել Գերմանիան 75 միլիոն մարկի ապրանք։

Բալկանեան պատերազմի լուրը Անգլիային առանձնակի անհանգստութիւն չը պատճառեց. նա գուշակում էր Կ. Պոլսի առումը, բայց Գերմանիայի ու Աւստրօ-Ունգարիայի քաղաքականութեան ոյժը ետ կանգնեցրեց բոլգարներին, ու Թիւրքաց զօրքը ետ դրաւեց Ադրիանուպոլիսը, յօգուտ գերմանական ու աւստրիական շահերի. Կ. Պոլիսը այժմ այն դուռն է Գերմանիայի համար, որը ապահովում է նրա համար Փոքր-Ասիայի աւազանը և նրա Միջագետքի բամբակի տնկարանները ու ճանապարհը դէպի Պարսից ծոց. բացի այդ, Կ. Պոլիսը այն հանգոյցն է, որտեղից գերմանացիք պիտի սպառնան անգլիական գաղութներին Սուէզի ջրանցքով. այսպիսով Կ. Պոլսի շնորհիւ անգլիական գաղութները աւելի են մօտենում Գերմանիային։ Պարզ է, որ Թիւրքերի դրութիւնը յեղեղուկ է, կրիտիկական, որ նոյն իսկ գերմանական յաղթութիւնը չի խոստանում Թիւրք ազգի յաղթութիւնը, այլ ընդհակառակը։ Ահա թէ ինչու Գերմանիան մի կողմից ուզում է ընկճել Ֆրանսիային ցամաքի վրա, չլաւել վտանգը արևմուտքից, անցնել ծովը՝ անգլիական գաղութների ճանապարհը վտանգելու, իսկ միւս կողմից զրաւել Ռուսական Լեհաստանը ու ջանք է թափում Թիւրքիայի ձեռքով շաղանակներ հանել իր գաղութային նպատակների համար։

Ալ. Մ. Աղաջ.

Մոսկվա

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԻՍԱԳԱՐԵԱՆ ՅՕԲԵԼԵԱՆԸ

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական Բարձրագոյն ըէսկրիպտ տրվեց Ֆինանսների մինիստրի անունով՝ Ալէքսանդր II կայսրի դատական օրէնսգրքերի կէս-դարեան զոյութեան առիթով։ Ըէսկրիպտի վերջում յիշված է, որ Բարձրագոյնս հաստատվել է առանձին նշան՝ կրելու կրծքի վրա ի յիշատակ յոբելեանի։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Արդարադատութեան մինիստր Շչեգլովիտովը դառնում է խպական գաղտնի խորհրդական, դատաստանական պալատների մի շարք նախագահներ և սենատորներ պարգևատրվում են շքադրամներով ու աստիճաններով։

Այսօր դատական կանոնադրութիւնների յիսնամեակի նախօրեակին, Պետրոս-Պողոս տաճարում ի Տէր հանգուցեալ Ալէքսանդր II Կայսրի դամբարանի մօտ կատարվեց հոգեհանգիստ, որին ներկայ էին արդարադատութեան մինիստրը, նրա երկու օգնականները, Պետական Խորհրդի նախագահի պաշտօնակատարը, սինոդի օբէր-պրոկուրորը, արդարադատութեան մինիստրի դիւանատան պաշտօնեաները և դատական պաշտօնեաներ։ Ալէքսանդր II Կայսրի դամբարանի վրա դրվեց մեծ արծաթեայ պսակ՝ «Ողորմած ու արդար դատարանի Հիմնարկողին արդարադատութեանը ծառայողների կողմից»։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեր. Գործ.)

19 Նոյեմբերի

ԿՈՊԻՆՀԱԳԷՆ.— Սանտի-Կվարանտից հաղորդում են, որ Էպիրոսի ժամանակաւոր կառավարութիւնը դիմեց վերին Էպիրոսի ազգաբնակութեանը մի կոչով, որի մէջ ասված է. «Մեր կռիւները վերջացան փառաւոր յաղթանակով։ Մեր բոլոր ցանկութիւնները իրականացան»։

ՍԱԼՕՆԻԿ.—Նոյեմբերի 15-ին 400 բոլգար հայդուկ Սորումիցայից, զինված երկու գնդակացիրով, յարձակվեցին 100 հոգուց բաղկացած սերբիական մի զօրախմբի վրա, պայթեցրին երկու երկաթուղային կամուրջ, կտրատեցին հեռագրաթելերը և բարձրացան լեռները։ Կռիւը տևեց ամբողջ օրը։ Երկուստեք կորուստները խոշոր են։ Նիշի հետ հաղորդակցութիւնը խզված կը մնայ մի քանի օր։

ՏՕԿԻՕ.—1915 թ. բիւջէի մէջ սովորական ծախքերը որոշված են 407 միլիոն, արտակարգ ծախքերը՝ 149 միլիոն ին։ Բիւջէն առաջարկում է երկու նոր զօրաբանակ կազմակերպել Կորէայում 7-ամեայ ժամանակով։ Քաղաքական կուսակցութեան ընկերութիւնը դէմ է զօրքի կազմը մեծացնելուն։ Սպասվում է լուրջ յարձակում կաբինէտի վրա պարլամենտի առաջիկայ նստաշրջանի բացման ժամանակ։ Ծովային մինիստրութիւնը խնդրել է լրացուցիչ 15 միլիոն ին՝ պատերազմական գործողութիւնների համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՕԳՈՒՏ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ

Ստացանք Թիֆլիսում Աստուծ Յարութիւնեանից և իր ընտանիքի անդամներից (տես «Նամակ խմբագր.»)—22 ռուբլի։ Նախորդ ստացվածների հետ միասին (տես «Մշակ» № 262) ունենք ստացած ընդամենը 268 ռուբլի։

ՑՕԳՈՒՏ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ

Ստացանք Զաքաթալայից Ա. Բէկ-Յովսէփեանի միջոցով 3 ռուբլի, որ նուիրել է Ոսկան Մ. Սուքիասեանը իր սուղ միջոցներից։ Նախորդ ստացվածների հետ միասին (տես «Մշակ» № 258) ունենք ստացած ընդամենը 131 ռուբլի։

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՏԻ ԿՈՉԸ

—

Քաղաքացիներ,

Ահաւոր և անողոք պատերազմը մօտենում է մեզ։ Մենք արդէն լսում ենք վիրաւորների հեծեծանքը, մենք արդէն ինքներս ենք տեսնում հայրենիքի պաշտպաններին, խոցված՝ թշնամու գնդակներով։ Անյայտ զորշ հերոսների շարքում լուռ լալիս են նրանց կանայք, մայրերը, երեխաները, որ զրկված են իրանց կերակրողից։ Օգնութիւն է հարկաւոր և նրանց, որոնք օրերը և ցուրտ գիշերները անց են կացնում դիրքերում, կամ արագ արշաւանքներում թշնամու երկրում։ Օգնութիւն է հարկաւոր և նրանց, որոնք առանց ճիչի և տրտունջի կրում են իրանց տանջանքները լազարէթներում։ Պէտք է տաքացնել, կերակրել և մխիթարել որբացած ընտանիքներին։ Պատերազմից վնասվածներին օգնող քաղ. կենտրոնական կոմիտէը իր ոյժի և միջոցների ներած չափով աշխատում է իրագործել այս բոլոր նպատակները։ Հաւաքված նուէրներից նա նպատ է տալիս վիրաւորների այն ընտանիքներին, որոնք զրկված են արքունական նպաստ ստանալու իրաւունքից, օգնում է այն վիրաւորներին, որոնք դուրս են եկել հիւանդանոցներից և լազարէթներից։ Կոմիտէի միջոցներից տրված 20,000 ռուբլուց աւելի միանուագ նպաստ։ Նրա միջոցներով քաղ. լազարէթներում կահաւորված է 240 մահճակալ։ Աջողութեամբ անցած «սպիտակեղէնի շաբաթը» հնարաւորութիւն տուեց մեծաքանակ տաք իրեր, թէյ, շաքար և պապիրոս ուղարկել կովկասեան բանակի առաջապահ դիրքերը, և մնացել է դեռ էլի շատ իրեր և սպիտակեղէն, որոնք պահվում են ապաքինվող վիրաւորների և մեր զօրականների կարիքաւոր ընտանիքների համար։

Բայց կոմիտէի միջոցները մեծ չեն։ Նրանք շուտով սպառվում են։ Որպէսզի լրացվեն դրանք, օրպէսզի հնարաւորութիւն ունենայ աւելի ընդարձակելու իր գործունէութիւնը, կոմիտէը մտադիր է դեկտեմբերին կազմել մի շարք ներկայացումներ, համերգներ, տօնավաճառներ, տօնածառ ընդհանուր վերնագրով՝ «Ծիննդեան տօնավաճառ պատերազմի զոհերին»։

Եւ այժմ, վաղօրօք յոյս ունենալով Թիֆլիսցիների արձագանք տալու վրա, կոմիտէը դիմում է ձեզ խնդրելով նուիրել իրեր, որոնք պէտք լինեն տօնավաճառի և վիճակախաղի համար. ձեռագործներ, ասեղնագործներ, արծաթեայ արժէքաւոր իրեր, objet de lux, խաղալիքներ, տօնածառի զարդեր, պարֆիւմերային և դասարանական առարկաներ, ամենը կընդունվեն շնորհակալութեամբ։

Նուիրաբերութիւնները մակագրութիւններով, որ նրանք ծիննդեան տօնավաճառի համար են, խնդրվում է ուղարկել քաղաքային վարչութիւն յանուն կոմիտէի նախագահ Ա. Ի. Խատիսեանի կամ քարտուղար Իւ. Կօրեակովի։

Ցանձնաժողովի նախագահ՝ Ա. Ի. Խատիսեան
Քարտուղար՝ Իւ. Կօրեակով

—

Հրատարակված է այսպիսի մի կոչ ևս, որ ուղղված է քաղաքի երեխաներին և որով կոչ է արվում նրանց՝ մանկական նուէրներով ուրախացնել իրանց այն հասակակիցներին, որոնց հայրը կամ եղբայրը գտնվում են պատերազմի դաշտում կամ վիրաւորված են հիւանդանոցներում կամ թէ չէ ընկել են հայրենիքի պաշտպանութեան մեծ գործում։

«Օգնեցէք, գթասիրտ մանուկներ,—ասվ ած է այդ կոչի մէջ,—ձեր հասակակիցներին, որոնք եկող մեծ տօներին զրկված են մնալու տօնածառից, և մրգերից, և նոր զգեստից։

«Փոքրիկ մանուկներ, օգնեցէք ձեր ընկերներին, որ նրանք տխուր չը մնան այս տօներին»։

«ՄԻ ԲԱԺԱԿ ԹԷՅ»

—

Ինչպէս հաղորդել էինք, նոյեմբերի 15-ից սկսել է իր գործունէութիւնը Հայկական Կենտրոնական Կոմիտէի հիմնած «մի բաժակ թէյ» սրճարանը, Գ. Տէր-Մարգարեանի տանը, № 25, Գօլովինսկի պրոսպեկտի վրա։ «Մի բաժակ թէյ» սրճարանը բռնում է տան ներքևի յարկում երեք մեծ լուսաւոր սենեակ. երրորդը, որ գտնվում է ներսում, յատկացված է ընթերցարանի և վաղվանից արդէն պատրաստ կը լինի։ Դահլիճը շքեղ կահաւորված է կանաչ գոյնի կահկարասիներով, մի շարք նկարներ, ադրիներ, արձաններ ու արօպլիկան բոյսեր ու ծաղիկներ զարդարում են ներսը։ Շուտով այնտեղ կը կախվեն նաև, ի միջի այլոց, հայազգի նկարիչ Գէորգ Բաշինջաղեանի նկարները։ Ցատակը ամբողջովին պատած է թանգարժէք գորգերով։ Թէյի, սուրճի, կաթի և այլն գները սովորականից ոչ միայն բարձր չեն, այլ և էժան են, ու աւելի թարմ։ Ընդունելութիւնն ու վերաբերմունքը վերին աստիճանի քաղաքավարի ու սիրալիր։ Սպասաւորում են մի քանի տիկիններ ու օրիորդներ ձրի։ Դահլիճը մանողները զգում են իրանց կարծես ոչ թէ սրճարանում, այլ լոյսով ու կօմֆորտով առատ սալօնում։ «На чай» չէ տրվում, այլ ձրգվում է յատկացված արկղիկի մէջ. ծառաներին նոյնպէս ոչինչ չեն տալիս այցելուները, այլ ձգում են մի այլ արկղիկի մէջ։ Գործը ղեկավարում են տ. տ. իշխ. Մ. Թումանեան, Յովհաննիսեան և այլք։ Զը նայած որ մի քանի օր է, ինչ բացված է, բայց արդէն այցելուների թիւը հետզհետէ աւելանում է։ Նկատի առնելով բարեպատակ ձեռնարկութիւնը—յօգուտ վիրաւորների—յուսով ենք, որ հասարակութիւնը կը գերադասի այցելել ու տալ իր լուման։

ՎՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

—

«Рус. Сл.»-ի Թիֆլիսի պ. Լիսօվցեվ հետեւեալ յօդուածն է զետեղել յիշեալ թերթում.

«Թիւրքիայի պատերազմի հէնց սկզբից ռուսաց մամուլը ընդգծել է Կովկասի վրաց ազգաբնակութեան հայրենասիրական ոգեւորութիւնը։ Եւ այդ բանը անսպասելի չէր։ Ներկայումս պէտք է հաշուի առնել այն ուսանելի գիծը, որ նկատվում է վրաց հասարակութեան մի նշանաւոր մասի մէջ և որը արժանի է ամենալուրջ ուշադրութեան։ Բանը նրանումն է, որ երբ պատերազմական անցքերը ծաւալվում էին Թիւրքաց Հայաստանում, վրացիները խորապէս զգում էին պատերազմը, որպէս ռուս քաղաքացիներ և կովկասցիներ։ այդ խօսքի լայն մտքով։ Բայց այն օրից, երբ Թիւրքաց զօրքերը երեւացին Անդրկովկասեան շրջանում, որ սահմանն է Վրաստանի, պատերազմը վրացիների համար դուռ ազգային բաւարարութիւն ընդունեց և զարգացաւ ծայր առնելու։

«Ռուսաստանի հզօրութեան կատարեալ հաւատով և վերջնական յաղթութեան անխախտ վստահութեամբ, Վրաստանի ազգաբնակութիւնը, մասնաւորի հոգեբանութեան անխախտ օրէնքի ոյժով, չէր կարող չենթարկվել անհանգստութեան զգացումին։

«Վրաստանի ազգաբնակութեան՝ փոխարքային ներկայացրած զեկուցումագրութեան մէջ, որով միջնորդում էին վրացաբնակ զական լեգիոն կազմել, ասվում է, որ «մի կողմից ծովային ընդհարման պատճառով, միւս կողմից այն պատճառով, որ այս տարի Բուլթայխի նահանգում անբաւարար բերք է եղել մեռաքսի բոժոժի, դափնու տերեւի և ընկոյզի, իսկ մրգի և խաղողի գները ընկել են պահանջի բացակայութեան և ծովային արտահանման ընդհատման պատճառով,—այդպիսով վրաց հասարակութեան դրութիւնը այս պատերազմի ընթացքում շատ ծանր կը լինի։ Անհրաժեշտ է լարել բարոյական և նիւթական ոյժերը՝ Վրաստանի ժողովրդի օգնութեան դրութիւնը բարձրացնելու նպատակով։ Այս մտքով էլ վրաց լրագիրներում յօդուածներ են գրվում։ Ազգաբնակութիւնը հրաւիրվում է հանգստութեան։ Հրապարակախօսները դիմում են Վրաստանի որդիների արիութեան փորձութեանը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ Այսօրվայ ծանր պատճառով «Մշակի» հերթական համարը լոյս կը տեսնի կիրակի, նոյեմբերի 23-ին։

◆ Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութեան համար ընտրված պատուիրակները թէ Թիֆլիսի և թէ թեմի եկեղեցիներից հրաւիրվում են մասնակցել քրիստոնեական խորհրդակցութեան, որ նշանակված է վաղը, շաբաթ, նոյեմբերի 22-ին, երեկոյեան ժամը 7-ին «Մշակի» խմբագրատունը (Соломоновская № 21)։ Խնդրվում է յատկապէս գաւառներից եկած համախոհ պատուիրակներին ներկայ լինել խորհրդակցութեան։

◆ Այսօր երեկոյեան Գրական-Գեղագիտական Սալոնի երեկոյթին՝ նուիրված հայկական հարցին Սալ-Ման շարունակելու է իր դասախօսութիւնը «Ռուս-Թիւրքական պատերազմը և հայերի դերը» վերնագրով հետեւեալ ծրագրով։ Կարսի պաշարումը, գրոհը և առումը։ Պատմական զօրահանդէս։ Ռուս զօրքի մուտքը Էրզրում։ Գենեռալ Լազարեվի Էրզրում գալը։ Հաշտութիւն. ռուս զօրքի Էրզրումը թողնելը։ Պատերազմի վախճանը և հետեւանքները։ Հայ կամաւորները ռուսաց բանակում։ Նրանց ծառայութիւնները։ Հայ ժողովրդի վերաբերմունքը դէպի ռուս բանակը։ Հայ գեներալներ և նրանց կատարած դերը պատերազմում։ Նոր գրաւված երկիրներում պատերազմից յետոյ։ Վերջաբան։ Սալ-Մանի դասախօսութիւնից յետոյ տեղի է ունենալու շօշափված հարցերի շուրջ մտքերի փոխանակութիւն։ Սկիզբը ուղիղ ժ. 9-ին երեկոյեան։ Առանձին հրաւէրներ չեն լինելու։

◆ Ինչպէս յայտնի է, ներկայումս Թիֆլիսումն են գտնվում մայրաքաղաքների մի քանի ռուս լրագիրների թղթակիցները։ Որքան և ուրախալի է այդ երևոյթը, սակայն ցանկալի էր, որ թղթակիցները յաճախ ստուգէին իրանց հաղորդած տեղեկութիւնների ճշդութիւնը և սենսացիա գործելու սովորութեան քիչ հետևէին։ Այլ և ցանկալի էր, որ նրանք աւելի մօտ և սերտ յարաբերութիւններ ունենային տեղական հայ, վրացի, թուրք գործիչների հետ՝ սխալների մէջ չընկնելու համար։ Այդպիսի անծանօթութեան հետևանք է այն ծիծաղելի լուրը, որ հեռագրել է «Р. Сл.» թերթի Լոնդոնի Լիսլովցեվը, թէ Մեսրոպ եպիսկոպոսին ուղեկցել են պատերազմի դաշտը հայ բանաստեղծ Ց. Թումանեանը և Վրացի գրող Շիրվանզադէն։ Դժուար թէ Թիֆլիսում գտնվէր մէկը, որ չիմանար, թէ Շիրվանզադէն հայ գրող է և ոչ վրացի։ Զենք կարող չը նկատել նոյնպէս, որ այդ թղթակիցները երբեմն սենսացիոն լուրեր են հաղորդում, մի բան՝ որ վայել չէ ներկայ լուրջ ժամանակի պահանջին։

◆ «Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ վաճառականներ եղբ. Համազասպ, Եղիշէ, Վաղարշակ և Յարութիւն Սէյլանովները հնթարկված են տուգանքի ամեն մէկը 500 ռուբլու կամ ամեն մէկը 3 ամսվայ բանտարկութեան՝ Թիֆլիսի նահանգապետի կարգադրութեամբ՝ նրա համար, որ ծախել են օգելից խմիչք, որի վաճառումը, ինչպէս յայտնի է, արգելված է օրէնքով։ Մենք ցաւում ենք, որ այդպիսի ապօրէն գործ կատարողները հայ վաճառականներ են, այն ևս խոշոր և հարուստ վաճառականներ։

◆ Վաղը, երեկ. ժամը 8-ին, Հասարակական ակումբում (Գրիբոյեդովսկայա, № 22), Ն. Կ. Գաուսման մի դասախօսութիւն է կարդալու «Կուռղ պետութիւնների աշխարհագրութեան տեսութեան» մասին, իսկ դոկտոր Լանգը «Ներկայ բոլշէն և կեանքի թանգութիւնը» թեմայով։

◆ Խմբագրութիւնս ստացաւ Գր. Վարդանեանի հրատարակութեամբ լոյս տեսնող հայերէն ծոցի քարտէզների առաջին և երկրորդ տետրակները, ա) Տրապիզոնի և Երզրումի շրջան, բ) Ալաշկերտի և Ատրպատականի շրջան։ Իւրաքանչիւրի գինը նշանակված է 10 կ.։ Քարտէզները ապագրված են երկգոյն և բաւական խնամքով, կարված առանձին շապիկների մէջ։

◆ Առաջիկայ կիրակի օրը, ամսոյս 23-ին, հայ կաթոլիկների աղօթատան կից շէնքում տեղի է ունենալու ծխականների ժողով, մի մշտական յանձնաժողով ընտրելու համար, օրը պէտք է գործի բարեգործական զանազան նպատակներով։ Այդ պատճառով խնդրվում է կաթոլիկ համայնքի բոլոր ծխականներին ներկայ լինել ժողովին, որը կայանալու է ժամը 12-ին։

◆ Ներկայումս Թիֆլիսումն է գտնվում Պետ. Դումայի կոմիտէի սանիտարական խումբը, որը կազմված է Պետրոգրադի բարձր կրթարանների ուսանողներից։ Նրա մէջ կան բժշկական ուսանողներ։ Խումբը Թիֆլիսում կը մնայ 2—3 օր, որից յետոյ Պետ. Դումայի անդամներ իշխ. Վ. Լ. Դէլիանիի, Զ. Գ. Գասպարեանի, Դ. Նիկոլայեվի և Մաք. Պալանեանի գլխաւորութեամբ ուղևորվելու է ռուս-Թիւրքական ռազմաբեմը։

◆ «Кавказъ» լրագիրը հաղորդում է, որ քիմիայի դոկտոր Գարեգին Ա. Պատրմաճեանը թոյլտուութիւն է ստացել կառավարութիւնից պղնձային հանքի հետախուզութեան համար Երևանի նահանգի Ալէքսանդրոպոլի գաւառի «Քէսալար-Զուլ» տեղում և ապա այդ թոյլտուութիւնը ծախել է Դաւիթ խան Աւան-Իւղբաշեանին։

◆ Թիֆլիսի մօլոկանները Բագուի մօլոկանների օրինակով մտադիր են իրանց միջոցներով մի լաղարէթ հաստատել վիրաւորների համար։ Գործի կազմակերպութիւնը ձեռնարկել են աչքի ընկնող մօլոկաններ։ Մօտ օրերս հրաւիրվելու է մօլոկանների համայնքի ժողով այդ հարցը քննելու համար։

◆ Ալէքսանդրոպոլի քաղ. վարչութիւնը պատերազմի կարիքներին նուիրել է 1000 ռուբլի։

◆ Այս օրերս Թիֆլիս է գալու համառուսական զեմստվոյական դաշնակցութեան լիազօր Մաւսին-Պուշկին։ Նրա գալու նպատակն է՝ Անդրկովկասում պատերազմից վնասվածներին օգնող զեմստվոյական կոմիտէ կազմել։

◆ Ներկայումս Թիֆլիսումն է գտվում Բաթումի քաղաքագլուխ իշխ. Ի. Զ. Անդրոնիկով։

◆ Այս օրերս Թիֆլիսից Քութայիս մեկնեց Պետ. Դումայի անդամ Սկօբէլեվ։ Սկոբէլեվը Կովկաս է եկել պատերազմից վնասվածների համար ձրի ճաշարաններ հիմնելու տնտեսական ընկ. յանձնարարութեամբ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Օպերա

«Մինիոն»՝ թէ սիմֆոնիկ և թէ երաժշտութեամբ՝ գեղեցիկ օպերան դրվեց Արքունական թատրոնում ներկայ սեզոնում առաջին անգամ նոյեմբերի 19-ին։

Ներկայացումը պատճառեց գեղարուեստական ու էստետիկի հաճոյք և այդ շնորհիւ աջող անսամբլի։

Կենտրոնական դերերում հանդէս եկան տ. տ. Սաարօսանան, Կօվելկօվա (Մինիոն), պ. պ. Զալիպսկի, Բրիւնէր, Էդրօվ, Վօլսկի։ Իւրաքանչիւրի խաղն ու երգը համապատասխան էր իր ամպլուային։

Բոլոր դերակատարները դարձան օվացիայի առարկայ։

Ստարօսանան, Կօվելկօվան և Զալիպսկին իրաւամբ կարող են ներկայ օպերային խմբի անգնահատելի ոյժեր համարվել։

Ներկայացման աջողութեանը բաւականին նպաստեց օրկեստրը իր համաչափ նուագով։

Առանձնապէս շնորհակալ ենք հմուտ ղեկավարի գործունէութիւնը բեմադրության ու դերակատարների նկատմամբ։ Ե.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

—

Հայոց Ներկայացումները Բագուում

Բաքու, 17 նոյեմբերի

Պատերազմը տեղահան է արել բոլորի մտքերը։ Բեմն էլ հակվել է արձագանք տալու տիրող տրամադրութիւններին։ Հայոց ներկայացումները հէնց սկսվեցին մի հայրենասիրական պիէսի խաղացումով, որ հեռաւոր նմանութիւն ունէր մեր օրերի անցուդարձերի հետ։ Սակայն հայրենասիրական զգացման ցուցահանումն և հրահրումը այլ ևս դարձաւ «արհեստ» և շահագործման առարկայ։ Շահագործման դիտաւորութեամբ նոյեմբերի 15-ին բեմ հանվեց նաև Բաֆֆիի «Դաւիթ-Բէկը», որ «դրամայի» էր վերածել դերասան Զարիֆեանը։ Եւ զարմանալի «դրամա» էր մեր դերասանի ձեռքի գործը։ Հրացանների պայթիւն, սրերի շաչիւն, աղաղակ, ճռռոմաբանութիւն, գոռում ու գոչիւն—ահա Զարիֆեանի կերակրած պիէսի բովանդակութիւնը։ Դերասանները բեմի վրա իրանց պահում էին ու քայլում որպէս մանրբէններ և պահանջկոտ հանդիսատեսը խորին ցաւ էր զգում, որ լուրջ և կիրթ մարդիկ կարող են այդքան ուրանալ իրանց ինքնութիւնը։ Սպանե՛ր, ջարդե՛ր, արօրի՛ր—աղաղակում էին բոլորը և հանդիսատեսների կեցցէներն ու ծափերը միախառնվում էին դերասանական խմբի աղաղակների հետ։ Կատարեալ քաոս, որ ստեղծվել էր ծայրէ ի ծայր լիքը Թատրոնում։

Մենք կարծում ենք, որ պատերազմն ու հայրենասիրութիւնը իրաւունք չեն տալիս ոչ օքի խանկի ծխելու մարդկային բիրտ հակումներին, որ այնու ամենայնիւ մարդկանց համար տենչալի պիտի մնայ խաղաղ համայնակեցութեան հեռանկարը։ Պատերազմը ժամանակաւոր չարիք է, որ չը պէտք է դառնայ երկրպագութեան առարկայ։ Այդ տեսակէտից դատապարտելի ենք համարում հայ դերասանական խմբի վարմունքը, որ ձեռք է վարկել «օգտագործել» հայ մեծ վիպասանի ստեղծագործութիւնները և նրանցից անշնորհք դրամաներ կարկատել։ Բաֆֆին մեծ հրապոյր ունի իր գրքերի էջերում, բայց նա գեղեցկանում է, երբ գեղեցկօրէն բեմ է հանվում։ Պէտք է խնայել վիպասանի անունն ու հռչակը. չէ կարելի շահագործութեան առարկայ դարձնել նրա յղացած գաղափարները, նրա սիրած հերոսներին։ Բաֆֆիով կարելի է մարդ գրաւել թատրոն, բայց չէ կարելի այդ մարդուն աղճատած Բաֆֆի հրամցնել։ Դ. Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 20 նոյեմբերի

Որպէս մի հայ անհատ, հետաքրքրվելով հայ ազգի հասարակական և կուլտուրական կեանքով, միշտ հետամուտ եմ եղել հայկական մամուլին և լաւ ըմբռնել նրա կատարած և կատարելիք խոշոր դերը մեր հայ իրականութեան խղճուկ կեանքում։ 27 երկար տարիներ իբրև ընթերցող «Մշակ» լրագրի, սկսած նրա հիմնադիր անմահ Գրիգոր Արծրունու արդիւնաւէտ գործունէութեան առաջին քայլերից, ես առանձին գոհունակութեամբ և հրճուանքով ինքս ինձ վրա զգացել եմ այն վեհ սերմերի բարգաւաճումը, որոնք մինչև օրս էլ, շնորհիւ Գրիգոր Արծրունու յանդուգն ազնիւ գործիչների անաչառ ու շիտակ սկզբունքներին, գաղափարական լայն և ազգօգուտ գործօն են հանդիսացել հայութեան լաւագոյն մասսաների նեղ շրջաններում։

Այսօր, երբ համաշխարհային պատերազմի դաշտում հոսում է արիւնը գեհերի նման։ այսօր, երբ պատերազմող պետութիւններից մեծը՝ Ռուսաստանը մի հոգի դարձած քաջարի կռիւ է մղում իր վրա արշաւող սեռաններին, աւարիչներին և թիւրքերի դէմ, յանուն արդարադատութեան, յանուն ազգերի փրկութեան, հայ ժողովուրդը ևս, իբրև նահատակ մի ժողովուրդ թիւրքաց ծանր և արիւնռուշտ լծի տակ ռուսական արդարադատ դրօշակի տակ իր կամաւորների խմբերով այսօր արիւն է թափում ազատութեան մօտալուտ զոյանչը ականջինս։

Բոլորիս սրտին յուզմունք է տիրել դարերով փայփայած մեր գաղափարների իրականացման նախօրեակին։ Ամեն մի հայ, թէկուզ լինի նա չափաւոր միշտ հնարաւորութիւն կունենայ շատ ֆչով էլ պէտք գալ ընդհանուր գործին։ Թող նա իր լուման, առանց քաշվելու քանակից, գցէ այն տուփը, որը մեղմացնելու է կուսակցների կրած տանջանքները, բուժելու է վիրաւորների վէրքերը և մխիթարելու պարտաճանաչութեան վեհ զգացմունքով։

Կարդալով «Մշակում» Գրիգոր Զալիսուշեանի մի շարք գեղեցիկ յօդուածները, խորին ունկնդրութեամբ զգացվում էինք մենք ամբողջ ընտանիքով եղբայրասիրութեան և պարտաճանաչութեան առջև։ Մանկահաս կրծքերում անգամ շարժվում էր պարտականութիւնների ըմբռնումը։

Համեստութիւնից դուրս թող չը համարվի սասծս, որ իմ ուսանող զաւակները, մինչև ամենաստրջն անգամ, սիրով առաջարկեցին յօդուտ հայ կամաւորների իրանց խնայողութիւնը՝ նախաճաշի համար ստացած։ Թող մենք հետևենք եղբայրասիրութեան մեր մեծ օրինակներին՝ մատաղ ու անմեղ սրտեր յուզող զարկերին, ՝ չը խնայենք մեր կօպէկները ազգօգուտ գործի համար։

Ներփակում ուղարկում եմ ձեզ, պ. խմբագիր, իմ կողմից միանուագ 10 ր., ամուսինս իր կողմից 5 ր., մեծ դուստրս Շուշանիկը (III իգական գիմնազիայի VI դ. աշակերտուհի) նախաճաշի համար խնայած 3 ր., որդիս՝ Վարդանը (Առևտրական ուսումնարանի միջին դասատան աշակերտ) նոյն խնայողութիւնը՝ 2 ր., Արծուիկը (I գիմնազիայի նախապատրաստ. դաս. աշակերտուհի) 1 ր. և Անահիտը 1 ր., ընդամենը 22 ր., որպիսի գումարը խնդրում եմ յատկացնել հայ կամաւորների օգտին։

Բացի այս, իմ սեպուհ պարտքս եմ համարում ուղարկել ձեզ նոյն նպատակով անընդհատ մինչև պատերազմի վերջանալը ամսական 10-ական ր.։

Խնդրում եմ ընդունել իմ այս համեստ նուէրն իբր մի կաթիլ մեր պարտականութիւնների ծփացող ծով կարիքների հանդէպ՝ քաջ զինուորների անհրաժեշտ պիտոյքները հոգալու համար։

Ասատուր Յարութիւնեան

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌՈՒՐԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Զօրօնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ղոյային և երեխայոց հիւանդութ. և ծախկահան.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՈՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեշ. հիվանդ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահան.։
ԿԻՆ.Բ.ԺԻԶԿ ՏԷՐ-ԳԵՒԻԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵՆՈՆՆԵՐԸ

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՈՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—114

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„Գուտտեմբերգ“ գրախանութում վաճառվում են

«Ռուս-Թիւրքական պատերազմի» քարտէզը հայերէն, պօստի ծախքով	50 կ.
Նոյնը հայերէն, երկու գոյնով	25 կ.
«Եւրոպական պատերազմի քարտէզը» հայերէն, պօստի ծախքով	1 ր.
«Հայոց պատմութիւնը», երեք պրակ, Դօլէնսի, կազմած	1 ր. 50 կ.
«Վէրք Հայաստանի» (էժան հրատարակութիւն) Արովեանի	50 կ.
«Պատմուածքներ Թիւրքահայերի կեանքից» Վ. Փափազեանի	1 ր.
«Հայ գրողներ». ժողովածու, մասն Ա. Ահարոնեանի, Ա. Դաշեանի, Թումանեանի և Փափազեանի, կազմած	2 ր. 25 կ.
«Բալկանեան պատերազմի պատմութիւնը», կազմած, 5 հատոր	5 ր.
«Հայկական խնդիրը և ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում» Ա. Սարուխանի	2 ր. 50 կ.
«Հին Հայաստան և անյայտ գաւառներ» Ս. Կանայեանի	75 կ.
«Արեւելեան խնդիրը և հայկական հարցը», Թարգմ. Սրմաքեշխանի	2 ր.
Добровольцы Карабага, Потто	60 к.
Кавказъ (Сѣверный Кавказъ и Закавказье) Сельско-хозяйственная, Торгово-промышленная, Фабрично-заводская и Горно-промышленная жизнь Кавказа, Конопка, въ перепл. съ перес.	3 р. 50 к.
Курсъ строительнаго искусства съ атласомъ чертежей, Малиновскаго	4 р. 25 к.
Исторія армянской церкви, Орманянца (быв. Патріархъ)	1 р. 50 к.
Хентъ, Раффи. пер. съ армянск. Кара-Мурзы	1 р.
Подъ гнетомъ времени, Рубакина (Иллюстраціями)	50 к.

Կարելի է և մարկաներով։

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гутенбергъ». (կ.) 1013. 2—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Ս. ՔԱՀ. ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

„Армяно - Григоріанскій Календарь“ на 1915 г.

Գինն է 25 կ.։ Դիմել՝ Ставрополь г., Свят. С. Теръ-Ованнесьяну.
(օ.մ.) 1002. 10—3

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный